ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ, 0242- 2-16-58, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 55-Ա

«01» մարտի 2023 թվականի Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԻՄ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի (սահմանադրական օրենքի) 137-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի հանրապետության աշխատանքային օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 176-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում 2023 թվականի մարտի 26-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի 28-րդ կետը.

Որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում 2023 թվականի մարտի 26-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության 2023 թվականի մարտի 1-ից մինչև 2023 թվականի մարտի 26-ը ներառյալ ժամանակահատվածում դադարեցնում եմ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պաշտոնակատարի իմ լիազորությունները՝ առանց վարձատրության պահպանման:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

Պաշտոնակատար
«01» մարտի 2023 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 56-Ա
01 մարտի 2023 թվական

ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով ***որոշում եմ***՝

1"2023 թվականի մարտի 8-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառմանկազմակերպման համար ապրանքների գնման նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ անհատական կազմով՝
Հանձնաժողովի նախագահ՝
Գոհար Ծերունյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար
Անդամներ՝
Գուրգեն Հեբոյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի ակումբավար
Սաթենիկ Սահակյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար
2"Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման, հավաքագրման և գնումների բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Անժելա Սաղաթելյանին.
Հիմք ընդունելով կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառման կազմակերպման ծրագիրը և ծախսերի նախահաշիվը, միջոցառման կազմակերպման և նվերների ձեռքբերման համար համայնքի 2023 թվականի վարչական մասի 08.2.4.51 դասակարգման 4269 (հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածի բյուջեյից հատկացնել 338550 (երեք հարյուր երեսունութ հազար հինգ հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԶՈՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«01» մարտի 2023 թվական
Քաղաք Մարալիկ

Հաստատում եմ՝

Անի համայնքի ղեկավարի պ/կ՝ Հ.Խաչատրյան

01 մարտի 2023թ.

ՆԱԽԱՀԱՇԻՎ

Մայրության, գեղեցկության և սիրո տոնի օրվան նվիրված միջոցառման ապրանքների գնում

	Ծախսերի անվանումը	Քանակը	Միավորի գինը (դրամ)	Ընդամենը (դրամ)
1	Քաղցրավենիք (շոկոլադե տուփ)	10 տուփ	2500	25000
2	Տորթ /մարտիպան/	10 հատ	5000	50000
3	Խմորեղեն	10 տուփ	3000	30000
4	Հյութ /բնական/	20 հատ	750	15000
5	Զովացուցիչ ըմպելիքներ	45 հատ	450	20250
6	Նարինջ	8կգ	700	5600
7	Մանդարին	5կգ	700	3500
8	Խնձոր	5կգ	500	2500
9	Նուռ	5կգ	1100	5500
10	Կիվի	1կգ	1000	1000
11	Բանան	5կգ	700	3500
12	Գորշ հաց կանապեիայի համար	10 հատ	240	2400
13	Երշիկի տեսակներ	4 հատ	2200	8800
14	Բաստուրմա	1 կգ	11000	11000
15	Պանիր սենդվիչի	10 տուփ	1200	12000
16	Վարունգ	2 կգ	1000	2000
17	Լոլիկ	2 կգ	1000	2000
18	Վարդեր /ձևավորված/	120 հատ	800	96000
19	Փուչիկ	150 հատ	50	7500

20	Անձեռոցիկ	6 տուփ	500	3000
21	Շամպայն	10 հատ	1700	17000
22	Գինի	10 հատ	1500	15000
	Ընդամենը		37590	338550

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. Ծերունյան

Հաստատում եմ՝

Անի համայնքի ղեկավարի պ/կ Հ.Խաչատրյան

01 մարտի 2023թ

ԾՐԱԳԻՐ

Մայրության, գեղեցկության և սիրո տոնի օրվան նվիրված միջոցառման ապրանքների գնում

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	Անցկացման վայրը	Կատարման ժամկետը	Կատարման պատասխանատու
1	Տոնական համերգ	Քաղաք Մարալիկ կենտրոնական հրապարակ	08.03.2023թ ժամը 16.00-ին	Գ.Հեբոյան
2	Հյուրասիրություն մասնակիցներին	Քաղաք Մարալիկ Արվեստի դպրոց	08.03.2023թ. ժամը 19.00-ին	Ս.Սահակյան

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԾԵՐՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 57-Ա

01 մարտի 2023 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂ., 1-ԻՆ ՆՐԲ., ԹԻՎ 15 ՀԱՍՑԵՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Թաթուլ Այվազի Հովհաննիսյանի կողմից (ծնված 03.03.1963թ., անձնագիր AR05918974) ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա. Սարիբեկյանին ուղղված դիմումը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրի 1-ին փողոց 1-ին նրբանցք թիվ 15 հասցեում գտնվող հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0,08717 հեկտար, որը հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991 թվականի մայիսի 24-ի թիվ 1 որոշման համաձայն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով սեփականաշնորհվել է Թաթուլ Այվազի Հովհաննիսյանի 4 անձից բաղկացած ընտանիքին:

Հաշվի առնելով, որ հողամասում կառուցված բնակելի տան անավարտ շինությունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, շինության պահպանման և սպասարկման համար նախատեսված հողամասը ըստ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 1-ին և 3-րդ հոդվածի դրույթներով՝ կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասերը, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը և հողհատկացման հիմքերը, եթե դրանք կառուցված չեն կամ չեն գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային

օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, ապա սույն օրենքի ուժով համարվում են այն ֆիզիկական անձի (անձանց) սեփականությունը, ով (ովքեր) տիրապետում է (են) այդ գույքը՝ որպես սեփական գույք: Ղեկավարելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի և 3-րդ հոդվածի դրույթներով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրի 1-ին փողոց 1-ին նրբ. թիվ 15 հասցեում գտնվող, քաղաքացիներ՝ Հովհաննիսյան Թաթուլ Այվազի ծնված (03.03.1963թվականին), Շաբոյան Մայրանուշ Նորայինի (ծնված 21.02.1964թվականին), Հովհաննիսյան Մարիետա Թաթուլի (ծնված 14.09.1988 թվականին) Հովհաննիսյան Ռոբերտ Թաթուլի (ծնված 08.01.1990 թվականին)/, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով (08-100-0013-0015 կադաստրային ծածկագրով), 0.08717 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման նպատակով, հողամասի և նրանում առկա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված բնակելի տան անավարտ շինության նկատմամբ, ճանաչել քաղաքացիների սեփականության իրավունքը:

2. Հողամասի սահմանները որոշվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԶՈՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«01» մարտի 2023 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ, 0242- 2-16-58, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 58-Ա

<<02>> մարտի 2023 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՆՈՐ ԹԱՂԱՄԱՍ 6-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 15 ՀԱՍՑԵԻ 08-003-0018-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության, 4-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ և 16-րդ կետերի, հիմք ընդունելով քաղաքացի Վրույր Գալուստի Գևորգյանի լիազորված անձ՝ Գալուստ Մկրտչի Գևորգյանի կողմից Անի համայնքի ղեկավարի պաշտոնակատարին ներկայացված 2023 թվականի փետրվարի 28-ի դիմումը (Լիազորագիր՝ տրված 09.01.2023թ. նոտարական ակտի կոդ: 447-20230109-90-6576849)՝ 2007 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տանը կից նախամուտքի շինությունը օրինական ճանաչելու մասին.**որոշում եմ՝**

1. Հաշվի առնելով, որ քաղաքացի՝ Վրույր Գալուստի Գևորգյանին /ծնված՝ 8-ը ապրիլի 1964 թվական, անձնագիր N AR 0529-8794, տրված 21.10.2016 թվականին, տրված 05.12.2017թ. 022-ի կողմից/ սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Նոր թաղամաս, 6-րդ փողոց, 15 բնակելի տուն հասցեում գտնվող 08-003-0018-0005 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.143 հա մակերեսով հողամասում (Վկայական N 04012023-08-0025) 2007 թվականին ինքնակամ կառուցված 14.50 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տանը կից նախամուտքի շինությունը /հետագայում՝ շինություն/ բավարարում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգով» սահմանված ինքնակամ շինությունների օրինականացման պայմաններին, ինքնակամ կառուցված շինությունը ճանաչել օրինական:

2. Օրինական ճանաչված շինության և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամսի Հայաստանի Հանրապետության կադաստրի

կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ձևին համապատասխան կազմված հատակագծերն ու շինությունների բնութագիրը կցվում են սույն որոշմանը:

3. Նշել, որ օրինական ճանաչված շինությունը՝

ա) չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

բ) չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

գ) կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,

դ) կառուցված է քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան,

ե) չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Ինքնակամ կառույցն օրինական ճանաչվելու համար սահմանել վճարների հետևյալ դրույքաչափերն ու վճարման պայմանները՝

ա) Շինությունը, որի ընդհանուր արտաքին մակերեսը կազմում է 14.50 քառակուսի մետր, որպես բնակելի նշանակության կառույց, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 13-րդ կետի «ա» ենթակետի համաձայն, վաճառքի գինը շինության յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար սահմանվում է բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված 15-րդ գոտում ընդգրկված Մարալիկ քաղաքի համար սահմանված շինության 0.1028 գործակցի կիրառմաբ, վճարի չափը կազմում է՝

14.5 քառակուսի մետր X 10000 դրամ X 0.1028 = 14906 (տասնչորս հազար ինը հարյուր վեց) Հայաստանի Հանրապետության դրամ:

գ) Ինքնակամ շինության օրինականացման համար վճարի չափը սահմանվում է 14906 (տասնչորս հազար ինը հարյուր վեց) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ենթակա է մուծման Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի բյուջեի 900495101447 հաշվեհամարին:

դ) Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում սահմանված վճարը չվճարելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Պարտավորեցնել անշարժ գույքի սեփականատեր Վրույր Գալուստի Գևորգյանին՝ սահմանված կարգով և ժամկետում կատարել օրինականացման համար սույն որոշմամբ սահմանված վճարումը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

6. Որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Վրույր Գալուստի Գևորգյանին սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **ԶՈՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

<<02>> մարտի թվականի 2023 քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 59-Ա

02 մարտի 2023 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԻԹՀԱՆՔՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-072-004-0022/ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 28-րդ կետի և 29-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով.***որոշում եմ՝***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Ձիթհանքով բնակավայրում գտնվող /կադաստրային ծածկագիր 08-072-004-0022/,բնակելի տանը տրամադրել հետևյալ հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք, Ձիթհանքով բնակավայր, 2-րդ փողոց, 3 նրբ., 4/3 բնակելի տուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԶՈՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«02» մարտի 2023 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 60-Ա

02 մարտի 2023 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԻԹՀԱՆՔՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-072-004-0022/ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 28-րդ կետի և 29-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով. ***որոշում եմ՝***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Ձիթհանքով բնակավայրում գտնվող /կադաստրային ծածկագիր 08-072-004-0022/,բնակելի տանը տրամադրել հետևյալ հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք, Ձիթհանքով բնակավայր, 2-րդ փողոց, 3 նրբանցք, 4/2 բնակելի տուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԶՈՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«02» մարտի 2023 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 61-Ա

02 մարտի 2023 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԻԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-012-0006-0008/ ՊԱՀԵՍՏԸ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 28-րդ կետի և 29-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով ***որոշում եմ***՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Անիավան բնակավայրում գտնվող /կադաստրային ծածկագիր 08-012-0006-0008/, պահեստին տրամադրել հետևյալ հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք, Անիավան բնակավայր, 12-րդ փողոց, թիվ 2 պահեստ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԶՈՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«02» մարտի 2023 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 62-Ա

03 մարտի 2023 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-036-013-019/ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 28-րդ կետի և 29-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով ***որոշում եմ***՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Գուսանագյուղ բնակավայրում գտնվող /կադաստրային ծածկագիր 08-036-013-019/,բնակելի տանը տրամադրել հետևյալ հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք, Գուսանագյուղ բնակավայր, 1ին փողոց, 30/1 ավտոտնակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԶՈՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«03» մարտի 2023 թվական
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 63-Ա

03 մարտի 2023 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ /ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-036-0020-0263/ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՐԱԿԱԼԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 28-րդ կետի և 29-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Թաթուլ Այվազի Հովհաննիսյանի դիմումը. ***որոշում եմ՝***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Գուսանագյուղ բնակավայրում գտնվող /կադաստրային ծածկագիր 08-036-0020-0263/ տնամերձ հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք, Գուսանագյուղ բնակավայր, 6-րդ փողոց, 29 հողամաս:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԶՈՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«03» մարտի 2023 թվական
քաղաք Մարալիկ